ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2013 թվականի N 126_Ա

ՌՈՒՖԻՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ *ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ* ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Կապան քաղաքի բնակիչ Ռուֆինա Համբարձումյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով *մարզպետարան դիմած Ռուֆինա Համբարձումյանին* հատկացնել 100.000/մեկ հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ *հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գումարի վճարումը:*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2013թ. սեպտեմբերի 5
ք. Կապան